

ԺԵ — ԺԶ ԴԱՐՈՒԻ ԿԱՐԵԻՈՐ ՏԱՂԱՐԱՆ ՄԸ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ԳԱԼԵՖՈՐՆԻՈՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Լոս Անճելոսի Գալեֆորնիոյ Համալսարանի (University of California, Los Angeles) զրադարանի հայերէն ձեռագրաց հաւաքածոյին մէջ կը գտնուի միջնադարեան Տաղարան մը, որ բացառիկ արժէք կը ներկայացնէ թէ՛ իր հետաքրքիր եւ թէ՛ բովանդակութեամբ:

Սոյն յօդուածով կը բաւականանանք տալ յիշեալ Տաղարանին նկարագրութիւնը եւ բովանդակութիւնը, հետազային ձգեցով տաղերուն քննական ուսումնասիրութիւնը:

Տաղարանը կը բաղկանայ 114 թուղթէ, մեծութիւնն է 18×13 սմ., իսկ զբաղած մասը՝ 13×9 սմ.: Գրչութիւնն է՝ բոլորգիր, գրուած սեւ մկանով, միասին, իւրաքանչիւր էջի վրայ 23 տողով: Տաղերուն վերնագիրները, ինչպէս նաեւ տուններուն սկզբնաւորները նա հասարակ, գրուած են կարմիր թանաքով:

Ձեռագիրը գրուած է երկու տարբեր գրչիներու ձեռքով: Առաջին 93 թուղթերը գրած է Մարգարէ անունով գրիչ մը, որդի Նուբադինի եւ Շահազլեանին, զի վայելումը անձին իմոյ եւ յիշատակ իմոյն եւ իր ծնողաց, Երկրորդ մասը (թղ. 94 – 114) գրուած է ո՛չ միայն տարբեր գրիչի մը ձեռքով, որուն անունն յիշատակութիւն չկայ, այլ նաեւ տարբեր որակի թուղթի վրայ:

Մարգարէ գրիչին ձեռքով ընդգրկուած թափինն մէջ կան երեք յիշատակաբաններ, որոնք արտագրուած են յօդուածին վերջաւորութեան: Դժբախտաբար, Մարգարէի գրած վերջին եւ գլխաւոր յիշատակաբանը պակասաւոր է՝ թերթ ինկած ըլլալուն պատճառաւ: Ենթադրելի է, անշուշտ, որ ինկած թափինն մէջ յիշուած ըլլալու են գրութեան ժամանակը, վայրը եւ այլ մանրամասնութիւններ, որոնք անմասօթ կը մընան: Մեր ենթադրութիւնն է, գրչութեանն

զատելով, որ ձեռագրին այս մասը ընդօրինակուած է հաւանաբար ժԵ դարու երկրորդ կէտին. իսկ երկրորդ մասը՝ Գ. Ե. 1551 թ. ւաղանէն առաջ: Այս հաստատումը կը հաստատուի ձեռագրին վերջին թերթին (թղ. 114ա) վրայ գտնուող յիշատակագրութիւնով մը, որուն համաձայն Հայոց Ռ (1000 + 551 = Գ. Ե. 1551) թուականին Տաղարանը պատկանած է Դաւիթ անունով վարդապետի մը, որ նոյն թուականին ձեռագիրը իրեն յիշատակ նուիրած է Եսիրանունդ եւ հոգեւոր որդոյն իմոյ՝ Էմանգոյ անուն պատանեկին, որ է որդի Ալբրամ վոյթին...:

Ստորջ է նաեւ, որ ձեռագրին երկու մասերը նախապէս երկու տարբեր տաղարաններ եղած ըլլալու են, եւ հետագային իրարու միացուած եւ միասնաբար կազմուած: Այս պարագան կը հաստատուի անով որ առաջին մասը ամբողջական ձեռագիր մըն է, որ կը վերջանայ գլխաւոր յիշատակաբանով: Ինչ կը վերաբերի երկրորդ ձեռագրին, ահոր առաջին տաղին սկզբնաւորութիւնը պակասաւոր է, եւ յաջորդ տաղերէն եւս դանազան թուղթեր ինկած են:

Ձեռագրին կողքը գործադարը եւ կաշեպատ աստիճանի է: Կողքին կոնակի ներքին մասը խախտած ըլլալով՝ չորս թերթեր (թղ. 10, 101, 102 եւ 111) կազմէն անջատուած են. իսկ կողքին վերջին նորոգութեանէն առաջ՝ որոշ թիւով թերթեր ներքին լուսանցքի կողմէն ամրացուած են: Ձեռագրէն կը պահուին անորոշ թիւով թերթեր՝ 92-93, 93-94, 107-108, եւ 111-112 թուակիր թուղթերուն միջեւ: Թղ. 108-ի արտաքին լուսանցքի մասը կտրուած է՝ ևս տողավերջի քանի մը գրերը կը պահուին. իսկ թղ. 112-ի երկուսերորդ մասը պատռուած եւ փրցուած է:

Տաղարանին փոքրաքանակ նկարագրա-

գութիւնը զուրկ է գեղարուեստական արժէքէ: Ձեռագործ թղ. 27ր-ի վրայ կայ միէջնայ մանրանկար մը, որ կը ներկայացնէ «Յովսէփի թագաւորը»: Այս նկարին ծածկ բոլորգործ գրուած եւ գծուարու ընթեռնելի արձանագրութիւնն է. «Յիշեցէ՛ք ի Դրբիստոս զնկարող պատկերին զՍարգիս (մեղապարտ սարկաւազ?) յիշեալ: Առի՛է զստ՝ կան նաեւ շորս փոքրիկ եւ անշուք նկարազարդումներ, նկարուած Հատուածներու սկզբնաւորութեան (թղ. 1ա, 28ա, 68բ եւ 108ա), որոնք փոքրիկ խորաններ են՝ լուսանցքի զարդերով միասին: Եւ վերջապէս՝ լուսանցքի տառնձին զարդ մը եւս կայ թղ. 65բ-ի վրայ:

Ձեռագործին ներքեւի լուսանցքներուն վերայ Հետագային գրուած են էջաթիւերը. ստիպի, էջազրուած անհիշել ըլլալուն պատճառաւ՝ Հարկադրուեցանք մեր ձեռքով նշանակել թերթերուն ճշգրիտ եւ յաջորդական թիւերը:

Տաղարանին զլիւսուոր արժէքը կը կազմէ անոր բովանդակութիւնը: Այստեղ ներկայացուած են ո՛չ միայն միջնադարեան տաղասացներու ծանօթ երկեր, այլ նաեւ այն պիսիներ՝ որոնք, ըստ երեւոյթի, ցարդ անծանօթ մնացած են: Այս յօդուածով՝ մեր նպատակը չէ Տաղարանի մէջ զանոոց տաղերը աստիճանայ դարձնել քննական ուսումնասիրութեան՝ զանոնք բաղդաւառելով արպագիր եւ ձեռագրային աղբիւրներուն հետ: Կը յուսանք այս աշխատանքը ընել յառաջիկային, առանձին գրութիւնով մը: Առայժմ՝ ստորեւ կու տանք Տաղարանին բովանդակութիւնը, այն համոզումով որ ան շահեկան պիտի ըլլայ բոլոր անոնց որոնք կը շահագրգռուին միջնադարեան Հայ բանահիւսութիւնով:—

(1) Թղ. 1ա — 27ա. (Անվերնագիր. երկն է Յովհաննէս Թլիւրարացիի «Արարածոց Մեկնութիւնը»):

Սկիզբը.

Ես Յովհաննէս նըստս ոգի,
Որ մականունն Թլղաւրացի,
Կամաւ իմով ի հոգ մըտի,
Բանս ժողովել ինձ յիշելի:
Աստ Կարմարան հաւաքեցի

Յարարածոցն Մովսէսի,
Մեկնեալ Վարդան վարդապետի,
Բազեալ ի Հարցքն Հոգելի...

Վերջը.

Եւ, Նոյնպէ՛ք Աւ Հոգւոյն Սըրբոյ անճառաւ,
[Կան,
Երգեսցուք փառք եւ պատիւ այժմ յաւիտեան,
[Եւս:
Եւ զանարժան եւ զեղկելիս թափառան,
զԹլղուրանցիս միշտ յիշեցէ՛ք Հարգ պատու
[ուսկան:

(2) Թղ. 28ա — 37ա. (Անվերնագիր. երկն է Առաքել Վարդապետ Բաղիշեցիի «Տաղ Յովսէփու»):

Սկիզբը.

Յորժամ Հայրն մեր երկնաւոր յերկիր հաւ,
[ճեցաւ,
Եւ բանն Աստուած իջեալ յերկնից մարմն,
[նացաւ,
Ի խաչափայտն ելեալ սիրով բարձրացաւ,
Եղաւ ի զերեզման եւ փառօք յարեաւ...

Վերջը.

... Ի Թվիս Հայոց մեծաց որ ութ հաւ,
[րիւրն է,
Ութուուն եւ երեք ի նոյն յարարարդեալ է,
Ոռնաչափ լինեցաւ այս յԱռաքելէ,
Վարդապետ կոչեցեալ բանից խընդրողէ:

(3) Թղ. 57ա — 57բ. Տաղ Խորհրդաւոր ի յԱրտամետաքոյ.

Սկիզբը.

Վայրի հաւիկ մէջ բռնած բերած
Եւ զբաժնէր ի նեղ զընդան...

Վերջը.

... Խնդրեցէ՛ք յԱստուծոյ որ Տէրն ողորմի
Ինձ այս զարիպիս, տայ ինձ Թեւ:

(4) Թղ. 57բ — 58բ. Ի Յովսէփ Թլղուրացու ասացեալ,

Սկիզբը.

Աստուած քարպիւկաց եւ խրատ ետուր,

Երբ որ չլսեցինք՝ նա ապտակ հոսեր :
Ապտակ վայն հաղար դիմանալի,
Սուր ք սուր, երկասյրի դուր... :

Վերջը .

... Մաքին Յովանէս, երբեք մինչեւ յո՞ւր,
Քանի ընթանաս դու ի ճանապարհ ծուռ :
Մի՞թէ ժամանակ ունիս հաղար բեր-
բի՛ւր ժամանակ, բի՛ւր :

(5) ԹՊ. 58թ - 59թ. Ի յԱռաքել Վարդապետ (Բաղիշեցւոյ) .

Սկիզբը .

Քանդակաթ սիրով, խանդակաթ,
Սիրտը ծաբանեալ պանքի,
Այն դիտ կու մաշէ...

Վերջը .

... Ի ձեր սուրբ յաղթան, ի ձեր սուրբ ք
Ըղտէք Առաքելս յիշէք, ըղձեղ կ'աղաչէ :

(6) ԹՊ. 59թ - 61ա. Տաղ ի Ֆրկայ ա-
սացեալ .

Սկիզբը .

Ա չարխ, երբ ծոխ մարդոյն,
Ձօրն ի բուն փորին նորա [հոր] .
Յորժամ դու քակես ըզմարդն
Յուշ թողուս որ դառնայ յոյր...

Վերջը .

... Մօտ յԱստուած արդար մի լաւ,
Քան զհաղար հարուստ մեղաւոր .
Եղբոր՝ յո՞վ երկիւղ ունի,
Մաւտ յԱստուած է խիստ փառաւոր :

(7) ԹՊ. 61ա - 62թ. Տաղ ի Ֆրկայ ա-
սացեալ .

Սկիզբը .

Մարդուն որ առլիղն ու բուրնն ի ֆալաքըն
չէ ըլլորդած,
Թէ չառ Թէ քըչիկ ջանայ, Թէ կորդի ալ
խիստ է ծըռած...

Վերջը .

... Ոչ խիստ յըշտայիլ պիտի է ոչ անհող
ի վնայ պատիկած,

Լուկ պարտ է արթուն կենալ, բայց ամէն ի
վերն է դրած :

(8) ԹՊ. 62թ - 65ա. Ֆրկայ առացեալ
բան .

Սկիզբը .

Պատգամն որ երես Աստուած Մովսիսի
Դու զայն մոռանաս,
Շնաս, զողանաս, սպանես,
Սուտ երդումն ուտես և ուրանաս...

Վերջը .

... Լաւ է որ զործովդ առնես,
Քան լեզովդ տանս և ոչ առնես .
Թէ չէ ամէն ծուռ բանի
Ի յառնան համար պիտի տաս :

(9) ԹՊ. 65ա - 66թ. Դարձեալ ի Ֆրկայ
ասացեալ .

Սկիզբը .

Ի սուրբ սեղանոյն վերայ քան զաղւորն
այլ իբէ չըզենեն .
Ձանպէսն ու զվատութն, եղբոր՝, Աստու-
[ծոյ]
զայ(ն) երբ նըւերեն...

Վերջը .

Այ, ողորմելի Ֆրկիկ, իմացիք զհոգւոյդ
չաւ ու զեն,
Որ չլինիս մեծութեամբով յորժամ որ զամա-
բըն ուզեն :

(10) ԹՊ. 66թ - 66թ, Տաղ ի Յովանէս
Թլզուրեցւոյ .

Սկիզբը .

Ո՞վ մահ, քանի զքեզ յիշեմ,
Կու զողամ ու սարսափեմ ես .
Ձրկալ քան ըզքեզ բեղի,
Ամենայն լեզոյ լեղի ես...

Վերջը .

... Յովանէս Թլզուրեանցի,
Ձուր կասես, զայլ ոք խըրատես,
Եօթանասուն տարի լըցիք,
Ի մեղաց մէջըն կացիք ես :

(11) Թղ. 66թ - 67թ. Տաղ ի Նազաշ Եւ պիսկապոսէ ասացեալ.

Սկիգրը.

Անձն ի՛մ, քեզ վայ հազար բերան, թէ խոռով
կենաս կամ ոք պահես,
Ձի խռովարարն է սասանայ, ջանայ որ
ըզտէրքն հաստատես։

Վերջը.

... Յայնժամ լինիս դու քրիստոնեայ, յոր-
ժամ խոցեն նա համբերես,
Եւ Գրիստոսի սիրուն համար զգո չարկամաց
ոտք համբուրես։

(12) Թղ. 67թ - 68թ. Դարձեալ ի Նազա-
շէ.

Սկիգրը.

Ինչ չաւ է քո զուր դատելդ, երբ յոտար
յերկիր տի տանին,
Թէ շատ թէ քըշիկ ջանաս, քեզ միայն պա-
տանքն է բաժին...

Վերջը.

... Գիտացի թէ լողնորդ էի, նա մեզաց
դեարն կու տանի,
Ի հող աշխարհին անկայ, չաւ չըկայ քան
զենն աւելի։

(13) Թղ. 68թ - 70ա. Ի Նազաշ Եւպիսկա-
պոսէ ասացեալ տաղ վառն զարիպի.

Սկիգրը.

Աստուծոյ մարդասիրին փառք յաւիտեան,
Որ ստեղծեր է զարարածըս զանազան,
Արեւիք, հիւսուս, հաբաւ, արեւմբեան,
Մարդն ի վեր է թազաւոր եւ անըման։

Վերջը.

... Նստալն ասաց, թէ՛ զարիպի սիրուն է
լըքնբուշ,
Բազմքը լեղի թըւի նըմա եւ վարդըն՝ փուշ.
Ձինաւար զարիպին խօսիբ անոյշ,
Ողորմութիւն տուր որ քակէ զմեղացըն
կփուշ։

(14) Թղ. 70ա - 72թ. Տաղ ի յԱռաքել
Վարդապետէ Բաղիշեցոյ.

Սկիգրը.

'Կանշ զբէ՛ք բանիս՝ որ պատուական է,
Հողոյ այլ եւ մարմնոյ ուրախութիւն է ։

Վերջը.

... Ես Առաքել մեզօք լըցեալ յաշխարհի,
Որ զբարութիւն ընդ վարդոյն սակաւ գովեցի,
Ի Գարբիէլ հրեշտակն օրինակեցի,
Եւ ի կոյս Մարիամ ծնեալն Յիսուսի։

(15) Թղ. 72թ - 74թ. Ոտանաւոր երա-
նելւոյմ Յոբայ.

Սկիգրը.

Վա՛յ էն աւուրն ոչ ես եղայ
ի յայտ մեղաւոր յաշխարհս անկայ,
Աստուած ստեղծեաց զիս բարեգործ
Եւ ես յիւր բարոյն մահրում ելայ...

Վերջը.

... Յորքն հասաւ իւր մուրառին,
Աստուած ըզմեր մուրառն տայ.
Բերան մ'ասենք թէ հայր մեզայ,
Աստուած ըզմեր մեղքըն չիշխայ։

(16) Թղ. 74թ - 75թ. Ի Խաչատուր կե-
չառեցւոյ բամ յարմարաւոր հոգեյի խրա-
տաւոր.

Սկիգրը.

Այս կեանքս է յերազ նըման եւ խարոզ ան-
զերծ յանդիման,
Բնութիւնս որ հասաւ մարդոյս, ստատեայ
ի յանդուեպ ի զընդան...

Վերջը.

... Փրկէ ի Հրոյն ըզմեզ եւ չըտաք ճա-
բակ գեհննի,
Բախէ է փրկիչն Յիսուս, ինքն աւրհնեալ
փառօք հայրենի։

(17) Թղ. 75թ - 78թ. Նորիմ կեչառեցւոյ
Խաչատուր Վարդապետի ասացեալ բամ եւ
օտանաւոր խրատական.

Սկիգրը.

Թէ մարդ ես եւ միտս ունիս,
Ես տամ քեզ խըրատ մի քանի.

Դու բաց ըզսրտի ականջդ
Ծւ գըրէ ի սիրտ ե ի հոգի...

Վերջը.

... Ի դատողական աթոռին
Նստի ի կան Ուռնայի,
Ծւ դադանիք գործոց յայտնին
Թանկաշառ մեծ հրապարակի:

(18) Թդ. 78ր - 83ա. Ոտանաւոր վասն
դատաստանի աւուրն հատուցեմ չարայ եւ
բարայ, որպէս վկայէ Սուրբ Աւետարանն
Քրիստոսի, ի Թորոսէ.

Սկիզբը.

Յորժամ տարբերքն զԵղըրդին, Երկինք և
Երկիր խոնարհանան,
Եւ կատարին կամք եղևոց որ արարածքն
հիանան...

Վերջը.

... Թորոս յիշէ զօրն աւազին երբ ժողովին
ի գառազատան,
Ի յայնժ անեղ հրապարակին ուր է լեզու եւ
պատասխան:

(19) Թդ. 83ա - 84բ. Երգի վասն կա-
տարածի, խալաւրն Զորքոսնի. Եզրտի
պատմագիրն Հրէից. ԺԸ Յշմն որ լինելոց է
զկնի մեռիմն (ի Թորոսէ).

Սկիզբը.

Չեղ ծանուցեմ, եղբար, լըսէ որ լինելոց է
յետ նեանն,
Նախ բան զգալուստն Քրիստոսի, որ զայ
փառօք ի գառազատան...

Վերջը.

... Այս փոփոխումն է որ յայտնի երկինք և
Երկիր նոր կերպարան,
Որ ցանցելոցն ցուցանէ, յայտնէ զայժմուս
եւ զապագայն:

(20) Թդ. 84բ - 86ա. Երգ վասն ագա-
հուրեան՝ որ այլոց քարոզմ եւ ես ոչ առ-
նեմ (ի Թորոսէ).

Սկիզբը.

Աղտեղացայ խաւար մեղօք քան ըղկին պոռ-
նիկն Արախու,
Մոռացայ զուխտն աստուածեղէն վասն
մեղաց և անշարի չարոյ...

Վերջը.

... Գիրք Թորոս, մըտօք յիմար, քեզ դա-
տաստան կայ և ուր մահու,
Ի յայնժ անեղ հրապարակին՝ ինչ շատ հա-
մար ունիտ տալու:

(21) Թդ. 86ա - 87բ. Պատմութիւն վա-
սն Բժան հեղմոցն գոր ագդեմք ի սակտի-
մաց մրտացս, գոր լուսմ փաք ի շատէ
յատտաւածային գրոց՝ որ ելանն ի չորքորդ
հրեշտակաց վասն երգեցողացն. ասացաւ ի
Թորոսէ.

Սկիզբը.

Ի յետ սանդժմանն արարածոց՝ որ զոյա-
ցոյց զայս ամենայն,
Աւոցն հաուր ի լիւսնութիւն, հոգմ ու քա-
մոյ արար սանժման...

Վերջը.

... Այս պատուհանք են յիմարացն, որք զօ-
ղանլին և յիմարանն.
Ով որ քամուս յիշուց տա՛հ՝ նա է Կայէն
եղբարքոսդան:

(22) Թդ. 87բ - 88բ. Ողբ ասացեալ ի
Ֆրկայ.

Սկիզբը.

Տէրն զիս պատուաց դիմօք, պատուական
պայծառ պատկերաւք,
Եւ զայն աղտեղի արդմաւք թաւալեալ ար-
եամբ շաղախաւք...

Վերջը.

... Լացէք զիս ամէնեղ ողբօք, որ չկացի
աւրիկ մարբնօք,
Ոչ մեղայ սաի կամօք, ոչ լացի կաթիկ
մարտատուաւք:

(23) Թդ. 88բ - 89ա. Նորի մոյմ ասաց-
եալ ի Ֆրկայ.

Սկիզբը.

Բանն ուր յառաջ քան պաշտօնական
Բերկինց յերկիր խոնարհեցաւ՝
Յորժամ բացաւ ակըն Հոգոյս,
Դրխտոսի ի մէջ մեր յայտնեցաւ...

Վերջը.

Աւարհեմ զամէնքըդ հաւատար,
Որ ի խաչին բռնեւեցաւ:
Ձայն երախտիքն ուր մոռանա՞մք,
Որ զայս ամէն մեզ կամեցաւ:

(24) Թղ. 89բ - 91բ. Տաղ զարիպի ի Զա-
փարիոյ նքիցաւ.

Սկիզբը.

Ի քէն Տէր Հայցեմ Հայր զըթական,
Պարզեւեայ ինձ իմաստ տեսական,
Նրդիկ բանս վասըն զարիպութեան
Որ լիսի ի յերկիր հեռաստան...

(25) Թղ. 91բ - 92բ. (Անվերնագիր).

Սկիզբը.

Յորժամ Աղամ ստեղծեցաւ զերդ զարեզա-
կըն էր,

Իւրոյ աւարողին կերպին նըման էր,
Հոգի, միտք եւ մարմին յատուկ ի նմանէր,
Որպէս երեք անձնեաւ բընութեամբըն մի էր
[...]

Վերջը.

... Յամենայն եղևից քեզ դոհութիւն, Տէր.
Ի քեզ եմք յուսացել՝ դի դու ես մեր Տէր.
Ձի դու ես ապուէն, յոյս եւ կենաց, Տէր.
Եւ քեզ միշտ դո. - (Թերթ կը պակսի):

(26) Թղ. 93ա - 93բ. (Անվերնագիր).

Սկիզբը.

Արհնութիւն անճառ շնորհաց Տէր,
Արեւ լուսատու տաճար Աստուծոյ,
Բարոյն բարունական թառամ վարդոյ
[...]

Վերջը.

... Փառք քեզ առաքեմք յամէն բերանոյ,
Դրխտոսի ծննալ մայր անճառ լուսոյ:

(27) Թղ. 94ա - 107բ. (Պատմութիւն
սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, արարեալ
Առաքել Վարդապետին Բաղիշեցւոյ):

(Այս երկին առաջին զուգը, որ կը
պատմէ Ս. Գրիգոր Լուսաւորչի ծնունդն
ու կենանքի առաջին շրջանը, կը պակսի ներ-
կայ ձեռագրին մէջ: Պատմութիւնը կը վեր-
ջանայ «Վասն ննջման Սրբոյն Գրիգորի» զը-
լուիով. սակայն վերջին քանի մը թերթերը
կորուստած են: «Հիշեցերորդ շարժարանք
սրբոյն Գրիգորի Լուսաւորչին» հաստատմին
կը յաջորդէ «Մեռտաւն շարժարանք Գրի-
գորի» զըլուիւ. հետեւաբար, կը պակսին
նաեւ վեցերորդէն մինչեւ տասներորդ շար-
ժարանքները նկարագրող հաստատմները):

(28) Թղ. 108 - 112ա. Տաղ եւ որ քոչ
փարոց ներսեւի հայրապետի գտնացեալ
Բահաճայից.

Սկիզբը.

Արհնեալ անուն անճառ Աստուծոյ մեծին
բանին Հաւր եւ որդոյ նոցին փառաւցի...

(Այս տաղէն կը պակսին քանի մը թեր-
թեր. իսկ վերջին թերթին երկու-երրորդ
մասը փրցուած է):

(29) Թղ. 113ա - 114ա.

Ինչպէս վերեւ յիշուեցաւ, այս տաղին
առաջին թուղթը մեծ մասամբ փրցուած է:
Թուղթին պահպանուած մասէն կը հետեւ-
ցուի, որ Յովհաննէս Նրդնկացի տաղասացի
ծանօթ «Տաղ Արամայ, Պլուզ Վարդապետի
առաջեալ է» ստանաւորն է):

ՎՈՒՇԱՍԱԿԱՐԱՆՆԵՐ.

(1) Թղ. 27ա. «Զմարգարէ անարժան
գրիւն յիշեցէր ի Դրխտոս եւ Աստուած որ
զորմի աքացէք: Նա եւ զծնաւալաց իմոց
չուրաղչին եւ Շահսթիթանին, եւ զըւերն իմ
Շահնիշարին: Եւ Աստուած զձեզ յիշէ յիւր
միւսանդամ զալուստն. ամէն»:

(2) Թղ. 27բ (գրուած Յովասափ Թագա-
ւորի նկարին ներքեւը).

«Յիշեցէր ի Դրխտոս զնկարող պատկե-
րիս զՍարգիս (մեղապարտ սարկաւազ?)
յիշեալ»:

(3) ԹՊ. 57ա. (զրուած Աւաբել Բաղի-
շեցիի «Տաղ Յովսէփի» երկի վերջաւո-
րութեան)։

«...Արդ՝ աղանձ ըզնից որք եղանակեց
նւ քաղցրաձան լիզուա սերով զայն երգէք,
Զիս եւ զիմ նընկեցեալսն յաղօթն յիշեցէք,
նւ թողութիւն մեղաց մերոց հայեցէք։
Զլըծողս եւ զփոխարկողս պատմութենի
Ձովստափ արքայի սուրբ ճրգնաւորի-
նքնեցողք եւ լրտղէ սուրբ պատմութենի,
Օրհնէք թ Բրիտանոս զՄարգարէ փանաբի,
նւ Աստուած ըզնից յիշէ յաւուրն աւնդի»։

(4) ԹՊ. 93բ. (Մարգարէ գրիչի գլխա-
ւոր յիշատակարանը)։

«Փառք ամենասուրբ երրորդութեանն
Հօր եւ որդոյ եւ Հոգւոյն սրբոյ. Ամէն։
«Որ ետ կարողութիւն ակար անձին ի-
մոյ, Մարգարէ սուտանուն կրօնաւորի, որ
զրեցի դստի ի վայելումն անձին իմոյ, եւ յի-
շատակ Հոգւոյ իմոյ եւ ծնողաց իմոց՝ նու-
րազնին եւ Շահաթանին, եւ եղբարց իմոց՝
Շահաբաբին, Գուլազին եւ Պուլաբաշին,
եւ եղբոր որդոցն՝ Էնիսա. . . » (Թերթ ին-
կած)։

(5) ԹՊ. 114ա.

«Փառք ամենասուրբ երրորդութեանն
Հաւր եւ որդոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ
միշտ։

«Արդ՝ ես անարժանս ի յանարժանից, եւ
փանազեա ի բազմաց, եւ անպիտանս ի յաղ-
բեւեանաց, եւ անբանս ի բանաւորաց, աը-
գէտս եւ անպիտանս, մեղասուրբ եւ քա-
ռապեալս, եւ ձեզ ամենեցուն երես ի մո-
խիթ, եւ գլուխ ի գետին վաթար ծառայս՝
Դաւիթ սուտանուն, միայն անուամբ վաթ-
դապետս։ Յստե լի եւ աստա սրաթի եւ օժար
կամովք իմովք զսակաւ Տաւաբանս, փոքր

ի շատէ յիշատակ շնորհեցի սիրասնունդ եւ
Հոգեւոր որդոյն իմոյ՝ Էսանգօյ անուն պա-
տանեկին, որ է որդի Ամրամ Վօթին. զի
պահեսցէ յիշատակ ի ծառայէս, հանապազ
եղանակէ եւ յիշեսցէ մի ողորմեալի զմեղա-
ւորս Բայց լուծի հրաման, ոչ ծախելոյ, ոչ
մարդոյ տալոյ, այլ պահեսցէ ազդէ յազդ
եւ յորդոց որդիս, յիշատակ անջինջ. ամէն։
«Ի ԹՎ. Ռ (1000+551 = 1551)»։

Զեռազրիս մէջ կան նաեւ Հետադային
զրուած Հետեւեալ յիշատակագրութիւն-
ները.

ԹՊ. 93բ (Ներքեւի լուսանցքին վրայ՝
նօսր գրով) — «Մտտիկն աղջիկ եղաւ ԹՎին
ՌձԻն (=Յ. Ք. 1676)։ Յովհանէս տղայ
եղաւ ԹՎին Ռ (...)»։

ԹՊ. 94բ (Ներքեւի լուսանցքին վրայ՝
նօսր գրով) — «Հաւաղ Վերգինն»։

ԹՊ. 113ա (Ներքեւի լուսանցքին վրայ՝
նօսր գրով) — «Աւաբել որդին Սերայի-
աբադին Միզայ իսան (աղահատուած, եւ Հե-
տեւաբար վերածանաւր անտառոյ)։

ԹՊ. 114ա (Ներքեւի լուսանցքին վրայ՝
նօսր գրով) — «Աջային աղբէր (..) Թը-
վին ՌձԵԼ (=Յ. Ք. 1709)։ Աջային եղաւ,
ԹՎին ՌձԵԼ, ինջիւր Դուլիկ տղայ յերա
(...)»։ ԹՎին (...)»։

ԹՊ. 114բ — Ամրող չէր գրաւող յիշա-
տակագրութիւն մը, զրուած կուտ եւ ան-
ընթեանի նօսր գրով։ Ասոր կը յաջորդէ
ներքեւի լուսանցքին վրայ, արարական տա-
ռերով անընթեանի արձանագրութիւն մը։

Բայց առաւ, ԹՊ. 46բ-ի վրայ կայ արա-
բական տառերով կնիք մը, որ հետեւեալաբար
Թրքական կամ պարսկական գրամբ մը դը-
րոշմն է։ Նոյն կնիքը կայ նաեւ ԹՊ. 47ա-ի
վրայ՝ անելի ազատ վիճակի մէջ։

ԱՒԵՏԻՍ Ք. ՍԱՆՃԵԱՆ

Հայագիտական Ամբիոնի Վարիչ

Լուս Անճեկոսի Գալիֆորնիոյ
Համալսարան